


Բարեկամություն Ա.

Գործառքություն չելեկություն

Տեղակարգություն



Թիֆլիս - 1940

24 SEP 2011

ԱՆԳՐԵՅՍ ԲԵՐԽՈՒԹԻԳԵՐԵՐԵ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿ

ՄԵՂՈՒՄԲՈՒԾՈՒԹԵԱՆ

26 ՆԿԱՐՈՎ.



Հրաշարակութիւն Աղօլք Թիւմայի

ԳԻՆՆ է 25 400.



ԹԻԳԼԻՄ

Արագատիս տպարան ՊՐԹԳՐԵՍ Դվօրցօվի փողոց

1910

7638
c-35

ԱՐ

638

Բ-35

ԱՆԴՐԻԱՆ ԲԱՐԽՈՒԹՅԵԱՆ

Հ Պ - 25.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿ

ՄԵՂՈՒՄԲՈՒԾՈՒԹԵԱՆ

26 ՆԿԱՐՈՎ



Համարակուրին Սովոր Գիւմայի



ԹԻՑԼԻՍ

Արագատիս տպարան «ՊՐՈԳՐԵՍ» Դվորցօվի փողոց

1910

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կազմելով մեղուարուծութեան այս հանրամատչելի և համառոտ ձեռնարկը՝ մեր նպատակն եղել է տալ մի գործնական ուղեցոյց այն մեղուապահների ձեռքը, որոնք փոքր ի շատէ ծանօթ լինելով մեղուապահական գործին՝ կարօտ են աւելի հմուտ և աւելի ձեռնհաս անձի ցուցումներին։ Ուղիղ է, հայերէն լիդուով կան մեղուարուծութեան և ուրիշ ձեռնարկներ, սակայն նրանք իրանց ընդարձակութեամբ և գնի թանգութեամբ մատչելի չեն ամենքին, մանաւանդ չքառոր և կիսազրագէտ գիւղացիներին։

Այս ձեռնարկը կազմելիս մենք օգտուել ենք ոչ միայն տարիների ընթացքում ձեռք բերած մեր անձնական փորձից, այլ նաև ուրիշ մեղուապահական ձեռնարկներից, որոնցից հարկ ենք համարում յիշել նախ Բէրտրանի «Մեղուների խնամատարութիւնը» և ապա Գորբաչև-ի „Гниледъ и Кислая червь“ բրոշէրը, որից թարգմանարար քաղել ենք Որդնացաւին վերաբերեալ հատուածը։

Մենք մեր նպատակին հասած կը լինէինք, եթէ այս համառոտ ձեռնարկը փքոր ինչ դիւրութիւն պատճառէր ոկտնակ և անփորձ մեղուապահներին և ուղիղ ճանապարհով առաջնորդէր նրանց առաջին քայլերը մեղուապահական գործունէութեան ասպարէզում։

Ա. ԲԱՐԽՈՒԴԻՄԱՐԵԱՆ



684


38

1. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Մեր կովկասեան մեղուները, ինչպէս ցոյց տուին նաև օտար հեղինակների հետազօտութիւնները, շատ բեղմնաւոր են և խաղաղ բնաւորութիւն ունին. մեղք հաւաքելու մէջ մեծ լնդունակութիւն են ցոյց տալիս, լաւ պաշտպանում են յարձակումներից և միւնոյն ժամանակ դիմացկուն են:

2. ՄԵՂՈՒԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ

Իւրաքանչիւր փեթակի ընտանիքը բաղկացած է մօրից, բանւոր մեղուներից, բոռերից և որդերից:



1. Մայր ձուի քանակութիւնն աւելացնում է ու գարնան վերջը հասցնում է ամենամեծ քանակութեան. այդ ժամանակ համարեա ամբողջ բունը լցուում է որդերով և ձուերով: Լաւ մայրը օրական կարող է ածել 3–4 հազար ձու: Չուերը լինում են երկու տեսակ՝ բեղմնաւորուած, որոնցից գուրս են գալիս մայրը և բանւոր մեղուները, և անբեղմնաւոր, որոնցից գուրս են գալիս բոռերը: Մայրը իր կեանքի ընթացքում բեղմնաւորուում է մի անգամ միայն: Մայրերը ապրում են հնգից մինչև վեց տարի, բայց ձու ածելու ամենաառատ շրջանը երեք տարի է տևում. այդ պատճառով

Էլ մայրերին երեք տարուց յետոյ պէտք է փոխել: իւրաքանչիւր ընտանիքում լինում է մի մայր: Նոր ծնուած մայրն առաջին օրերը, մինչև կատարելապէս ամրանալը, մնում է տանը, յետոյ դուրս է գալիս հարսանիքի՝ բոռի հետ պատահելու և բեղմնաւորուելու: Բեղմնաւորումը կատարում է օդի մէջ, թռչելիս, որից յետոյ մայրը վերադառնում է տուն և մի քանի օրից յետոյ սկսում է իր միակ գործը — ձու դնելը: Եթէ մօրը, մի քանի անգամ դուրս գալուց յետոյ, չէ յաջողուում բոռի հետ պատահել, նա կորցնում է նորից դուրս գալուցանկութիւնը և նրա ածած ձուերից դուրս են գալիս միմիայն բոռեր: Այդպիսի մօրը ասում են բոռածու մայր: Դրանց պէտք է ոչնչացնել և տեղը տալ պահեստի մայր կամ ձու, որ մեղուները նորից մայր պատրաստեն:



Բանւոր մեղուներ (նկար 2): Բանւոր մեղուներն են կատարում փեթակի մէջ բոլոր աշխատանքը, — հոգում են որդերի կարիքը, շինում են մեղրահացերը, հաւաքում են մեղր, բերում են ջուր, ծաղկափոշի և ակնամոմ: 2. Բանւոր մեղուները բանւոր մեղուն իր կեանքի առաջին երկու շաբաթը աշխատում է փեթակի ներսը, որից յետոյ դուրս է գալիս, շրջապատի հետ ծանօթանում և ապա գնում դրսի աշխատանքի:



Բոռը (ործ մեղու, նկար 3): Բոռերը երկան են գալիս գարնան կէսից մինչև բերքի վերջը: Դրանց կատարած միակ գործն է մօրը բեղմնաւորել: Այդ պատճառով էլ պիտի խուսափել զրանց շատ բազմանալուց: Դրանց թիւը սահմանափակութեամբ միջոցն է՝ նախ պահել ջահէլ մայրեր և երկրորդ՝ տալ արհեստական մոմաթերթ շրջանակի ամբողջ մեծութեամբ:

Բերքը վերջանալուց յետոյ՝ բանւոր մեղուները բոռերին դուրս են անում փեթակից և նրանք ոչնչանում են

քաղցից ու ցրտից: Տարուայ միւս ամիսներում նրանց ներկայութիւնը նշան է, որ ընտանիքը մայր չունի կամ մայրը բեղմնաւորուած չէ: Բոռերը նկատելի կերպով խոշոր են բանւոր մեղուներից և խայթոց չունին:

Որդի: Մօր զրած ձուերը երեք օրից յետոյ դառնում են որդեր, որոնց մեղուները կերակրում են կաթով՝ պատրաստած մեղրից, ջրից ու ծողկափոշուց, ու ծածկում են բջիջը մոմեղին բարակ կնիքով. որդը դառնում է հարսնեակ: Զու զրած օրից մինչև մեղու դառնալը տեսում է 21 օր, բոռերինը տեսում է 24, իսկ մօրը՝ 16 օր: Բանւոր մեղուի որդի բջիջը լինում է փոքրիկ և կնիքը տափակ, բոռինը — մեծ, դուրս ընկած, ուռուցիկ, մօրը — երկարածիկ կաղնու նման:


3. Ի՞նչ են բերուի Մեղուները

Մեղուները հաւաքում են մեղր, բերում են ծաղկափոշի, ակնամոմ, ջուր և շինում են մեղրամոմ: Մեղրը ժողովում են ծաղիկների հիւթից, որ կոչւում է նեկտար: Այդ նեկտարը պահում են ստամոքսի առաջին մասում և տեղաւորում ապա հացերի մէջ: Ծաղկափոշին մեղուները բերում են յետին ոտների կողովիկներով և դարսում են նոյնպէս բջիջների մէջ: Ակնամոմը հաւաքում են ծառերի սառերից և գործ են ածում, երբ հարկաւոր է լինում ծածկել կամ փոքրացնել փեթակի ճեղքերը և ծակերը: Զուրը բերում են որդերի համար կերակրու պատրաստելու: Մեղրամոմը ոչ թէ բերում են զրսից, այլ արտագրում են իրանք մեղուները: Մեղրամոմ առատութեամբ արտադրում են բերքի լաւ ժամանակը:

4. Ի՞նչ Պիսի ՓեթԱԿ է ՀԱՐԿԱԼՈՐ

Եղած փեթակների մէջ ամենատարածուածն և յարմարը Դադան-Բլատտի փեթակն է: Այդ փեթակը բաղ-

կացած է յատակից, բնից, վերնայարկերից, շրջանակներից, կիսաշրջանակներից, միջնատախտակից, բարձից և ծածկից (խուսի, նկար 4):



4. Դադան-Բլատտի փեթակը

1) Բունը ունի տասներկու շրջանակ, և այսքանը հերթէ, որ ընտանիքը կատարելապէս զարդանայ:

2) Նայած տարուայ եղանակին կամ ընտանիքի ոյժին՝ փեթակի բունը կարելի է մեծացնել կամ փոքրացնել միջնատախտակով:

3) Փեթակները տարուայ ընթացքում անհրաժեշտ է երեք անգամ մաքրել: Դադան-Բլատտի փեթակի յատակը շարժական լինելով՝ շատ հեշտութեամբ մաքրում է:

4) Արկանոցն այնպէս է շինուած, որ հեշտութեամբ կարելի է մեծացնել, փոքրացնել և կարելոր դէպքում բոլորովին փակել. մի ուրիշ առաւելութիւնն էլ այն է, որ մեղուներն անմիջապէս մտնում են փեթակը, առանց մեծ պտոյտներ դործելու և ժամանակ կորցնելու:

5) Հնարաւորութիւնն է տալիս հեշտ և արագ գննել փեթակը. դրա համար հարկաւոր է միայն բաց անել նրան և մի հայեցքով կամ, դժուար դէպքում, հանելով բնի կենտրոնից մի շրջանակ, դուք անմիջապէս ծանօթանում էք ամբողջ ընտանիքի դրութեան հետ. սա մի այնպիսի առաւելութիւն է, որ հնարաւորութիւնն է տալիս հեշտ և արագ գննել փեթակը, ուստի և մի մեղուապահ հեշտութեամբ կարող է կառավարել և հսկել հարիւրաւոր փեթակների վրայ:

6) Սովորաբար մեղուները մեղը դարսում են բնի վերին մասում, ուստի Դադան-Բլատտի փեթակի մեղը բի ամբարը՝ վերնայարկը, դնում են անմիջապէս բնի վրայ. վերնայարկերի քանակութիւնը, նայած տարուայ բերքին, կարելի է աւելացնել, առանց շարժելու փեթակի բունը և անհանգստացնելու մեղուներին:

7) Հնարաւորութիւնն է տալիս առանց մեղուներին վասելու և ջարդելու հաւաքել մեղը:

8) Շատ հեշտութեամբ կարելի է մեղուանոցը մեծացնել արհեստական ձագերով և միենոյն ժամանակ կարելի է նաև արգելել չափից դուրս բնական ձագ տալուն:

9) Այս փեթակը, չնորհիւ իր կազմութեան, պահպանում է մեղուների ընտանիքը շրից և ցրտից:

10) Դադան-Բլատտի փեթակը, իր բոլոր առաւելութիւններովը, հնարաւորութիւնն է տալիս մեղուապահին մեղուանոցին ցանկացած ուղղութիւնը տալու մեղը կամ ձագ ստանալու տեսակէտից:


Այս տիպի փեթակը ցանկալի է շինել $\frac{3}{4}$ վերշոկ հաստութիւն ունեցող տախտակից, և լուրջ պէտք է հսկել, որ փեթակի մասերը մի չափսի լինին շինուած, որպէսի կարելի լինի նրանց մի փեթակից միւսը փոխադրել: Նոր ըսկըսողները անսպայման պէտք է ձեռք բերեն մի հատ կանոնաւոր և ուղիղ չափերով փեթակ, որից և ընդօրինակեն միւսները:

5. Ի՞նչ ՏԵՍԱԿ ԻՐԵԲ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՀՈՐ

Քողը պաշտպանում է մեղուապահի երեսը և պարա-
նոցը մեղուների խայթելուց: (Նկար 5): Քողը փոխանակ



5. Քող



6. Ծխարար

Գնելու, կարելի է պատրաստել տանը բարակ ախովից կամ
չիքիլայից, և ապա հագցնել կամ կարել լայնեղը գլխարկի
եզերքին; Քողի տյու մասը, որ գալիս է երեսի դիմացը,
պէտք է առ կտորից լինի:

Ծխարարով ծուխ են տալիս մեղուներին, երբ հարկա-
ւոր է նայել փեթակը: Վառելու համար գործ են ածում
փթռակ, թուղթ և շորի կտորներ: (Նկար 6).




7. Վորձիքի գործիք

Գործիք, որ գործ են ածում շրջանակները բարձրաց-
նելիս: (Նկար 7).




8. Խողանակ

Խողանակը գործ են ածում մեղրահացերը մեղուներից
սրբելու համար: Կարելի է դրա փոխարէն գործ ածել և
սագի փետուր: (Նկար 8).




9. Վանդակ




10. Աբրոտի թէյամանը

Մոմհալիչ թէյամանը գործ են ածում շրջանակի վե-
րայ արհեստական մոմաթերթ կոցնելու համար: (Նկար 10).



11. Աբրոտի դանակ


Աբրոտի դանակը գործ են ածում մեղրահացերի կնիք-
ները բանալու համար: (Նկար 11).



12. Քերիչ

Քերիչը գործ են ածում փեթակների կեղար քերի-
մաքրելու, շրջանակներն իրարից հեռացնելու և փեթակից
հանելու համար: (Նկար 12):


Այս վանդակի մէջ միաժամանակ տե-
ղաւորում են մօրն և այն կերակուրը, որ
անհրաժեշտ է նրա համար: Երբ մայրն ու-
տում, վերջացնում է կերակուրը, նա հնա-
րաւորութիւն ունի ինքն իրան, առանց մե-
ղուների օգնութեան, գուրս գալու վանդա-
կից: Այդ նպատակով վանդակի ստորին մա-
սում շինուած է մի փոքրիկ անցք: Մեղուները
հեղտութեամբ ընդունում են այս կերպով
տուած մօրը: (Նկար 9).



13. Արկի մոմահալ


Մոմահալը ծառայում է հին և կտոր մեղրահացերից մոմ ստանալու: Փոքրիկ մեղուանոցների համար անհրաժեշտ գործիք է: Հալելու համար հաւաքած մոմահացը մէջն են ածումն դնում արկի ճառագայթների տակ: (Նկար 13).

Բայց արկի մոմահալից կան և ուրիշ բազմատեսակ գործիքներ, որոնք հալում են մոմը գոլորշու կամ ճնշման միջոցով: Գոլորշու զօրութեամբ ներգործողներից ամենից առաջ յարմարաւորը այն մոմահան է, որի նկարը դետեզուած է այստեղ:



14. Ճնշող մոմահալ
քան ժամանակ, մինչեւ որ տոպրակի մէջ այլ ևս մոմ չը


Այս գործիքը ծառայում է հին, սեացած և անպէտք հացերից մոմ ստանալու համար: Հալելու համար ժողոված հացերը տոպրակի մէջ ածելուց յետոյ դնում են գործիքի մէջ, լցնելով ջուր՝ գործիքում յարմարեցրած տեղում ու դնում կրակի վերայ: Առաջ, երբ մոմը կըհալուի ու կըթափուի ամանի ծորակից դուրս, պէտք է տոպրակը հետազնեաէ ճնշել վերկի պտուտակի օգնութեամբ և շարունակել այս գործողութիւնն այն միայ:



15. Գլանաձեւ մեքենայ

Այս գործիքով արհեստական մոմաթերթ են պատրաստում: Սրա կարենը ութիւնը զգալի է միայն այն մեղուանոցներում, ուր տարեկան մեծ քանակութեամբ մոմաթերթ են գործ ածում:

Արհեստական մոմաթերթ պատրաստելու համար՝ նախ հալում են մեղրամոմը, յետոյ հալուած մոմի մէջ կոխում են նախապէս ջրի մէջ թաց արած թիւականման մի տախտակը, որ մոմը կպչի նրան, և ապա շուտով տախտակը հանում են ամանից ու պոկում վրայի մոմը: Այսպիսով ստացուած մոմաթերթը մի քանի օրից յետոյ անց են կացնում զլանաձեւ մեքենայի միջով (Նկար 15) ու ստանում գործածութեան համար արդէն պատրաստ մոմաթերթ:



16. Արկու

Այս արկու ծառայում է հացեր տեղափոխելու համար. կարող է ժամանակաւորապէս փեթակի տեղ ևս ծառայել և շատ յարմար է, որ կիսաշրջանակով մեղր տեղաւորեն նրա մէջ և ուղարկեն շուկայ ծախելու համար: Սրանով անվտանգ կարելի է մեղուներ տեղափոխել հեռաւոր տեղեր: (Նկար 16.)

6. ԵՐԲ ՊԵՏՔ Է ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԴՈՒՐՍ ԴՆԵԼ

Երբ ձիւնը դաշտերից վերանումէ և օրերը տաքանում են այնքան, որ այլ ևս մեծ ցրտեր չեն սպասում, տուն դրած մեղուներին պէտք է գուրս դնել և բոլորին մի անգամից: Հնարել տաք և հանգիստ օր և գործը սկսել հէնց առաւօտուանից, որպէսզի մեղուները կարողանան օրուայ ընթացքում թոփչք գործել մաքրուելու: Նախապէս պէտք է պատրաստել փեթակների տեղը: Փեթակները պէտք է դնել բոլորին հորիզոնական դիրքով, իրանց անցեալ տարուայ տեղը, գետնից ոչ շատ բարձր՝ ագուռների կամ փայտերի վրայ, իրարից այնքան հեռու, որ մեղուապահը աշխատելիս կարողանայ ազատ շարժուել: Դուրս դնելու ժամանակ փեթակի արկանոցը պէտք է ծածկուած լինի. բաց անել, երբ մեղուները հանգստացած կը լինին—մօտաւորապէս կէս ժամից յետոյ: Մեղուների մաքրուելուց յետոյ, հարկաւոր է փեթակների արկանոցները փոքրացնել՝ փեթակի մէջ տաքութիւն պահելու և գողութեան դէմ նախազգուշութեան համար: Ցաջող ձմերած ընտանիքները անմիջապէս դուրս են թռչում մաքրուելու և շուտով էլ հանգստանում են:

Այն ընտանիքները, որոնք թոփչք գործելուց յետոյ չեն հանգստանում և որոնց մէջ մեղուները գուրս ու ներս են անում, կարծես մի բան որոնելիս լինին, հաւանակաբար մայր չունին:

Կարող են պատահել և այնպիսի ընտանիքներ, որոնք սովոր թուլացած լինին. զրանց հարկաւոր է գոլ շաքարաջրով սրսել, պաշար տալ, փակել արկանոցը և դնել տաք սենեակում մինչև ոյժի դալը: Անհրաժեշտ է հէնց նոյն օրը հարկանցօրէն՝ վերեից՝ նայել բոլոր փեթակները՝ ստուգելու պաշարի քանակութիւնը: Որտեղ պաշար չը կայ, պէտք է տալ մեղրահաց կամ դնել շը անակների վրայ, քաթանի տակ, շաքարի կտոր՝ չոր կամ ջրի մէջ թաթախած, մօտաւորապէս 2—3 ֆունտ:

7. ԻՆՉՊԵՏՔ ՊԵՏՔ Է ՎԱՐՈՒԵԼ ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Զը նայած որ մեր կովկասի մեղուները շատ հանգիստ են խաղաղ բնաւորութիւն ունին, այնուամենայնիւ մեղուապահը գարնանը, մանաւանդ նոր սկսողը, խայթելուց ազատ մնալու համար, պէտք է երեսը և պարանոցը ծածկէ քողով (նկար 5) և ձեռքի գաստակներն էլ պաշտպանէ բազպաններով: Լաւ է գարնանը՝ գողութիւն չառաջացնելու: համար, փեթակները նայել առաւօտեան կամ երեկոյեան: Նախ քան փեթակի բաց անելը, պէտք է արկանոցից փոքր ինչ ծովս թողնել փեթակի մէջ, որից յետոյ մեղուները ծծում են մեղը և այդ գրութեամբ գժուարանում են խայթել: Փեթակը նայելիս կոպիտ ու յանկարծակի շարժումներ չը պիտի անել. ընդհակառակը՝ պէտք է վարուել զգուշութեամբ, հանգիստ ու միենոյն ժամանակ գործը կատարել արագութեամբ: Եթէ մեղուն խայթում է, պէտք է իսկոյն հանել խայթոցը: Առաջին խայթոցները ուսուցը են առաջացնում և զգալի ցաւ են պատճառում, բայց որոշ ժամանակից յետոյ աննկատելի են դառնում:

8. ՓԵԹԱԿՆԵՐԻ ԶՆՆԵԼԸ

Մեղուներին գուրս դնելուց յետոյ, օդտուելով առաջին տաք և խաղաղ օրից, պէտք է ամեն մի փեթակ առանձին առանձին զննել ստուգելու համար, թէ ընտանիքը մայր ունի՞ և ինչ զրութեան մէջ է որդը: Եթէ նկատէք որդ և կանոնաւոր կերպով գրուած ձուաներ, այդ գէպը ում առ տեսնեն աւելորդ է, որովհետեւ զրանք արդէն ապացոյց են, որ ընտանիքը մայր ունի: Իսկ երբ տեսնում էք ընտանիքներ, որոնք մայր չունին, այդ գէպը ում անհրաժեշտ է այդ ընտանիքներին տալ կամ պահեստի մայր կամ թէ միացնել մեղուանոցի մի թոյլ ընտանիքի հետ, որը մայր ունի: 2) Պէտք է առանձին ուշք գարնել, որ փեթակում մեղը բաւականաչափ

պաշար լինի, որովհետև այս ժամանակ մեղրի գործածութիւնն աստիճանաբար շատանում է և պաշարի առատութիւնն առաջնակարգ պայման է ընտանիքի զարգացման համար, որից և կախուած է գործի ամբողջ յաջողութիւնը։ 3) Բունը պէտք է փոքրացնել միջնատախտակով, թողնել այնքան շրջանակ, որքան մեղուները ծածկում են, հեռացներով հին, կեղառուած, բորբոսնած և բոռաքջիջներով լի հացերը. հոգ տանել որ, ինչքան կարելի է, տաք ծածկուած լինի փեթակը։ 4) Պէտք է մաքրել փեթակների յատակը, որպէսզի մեղուները ստիպուած չինին իրանք աւելորդ ոյժ և աշխատանք գործ դնելու։ Մեղուանոցի իւրաքանչիւր փեթակ պէտք է ունենայ իր համարը կամ նշանը և ամեն մի բան, որ նկատում էք այս կամ այն փեթակի վերաբերմամբ, պէտք է անցկացնէք տետրակի մէջ իր համարի կամ նշանի տակ, որպէսզի դուք ամեն անգամ ստիպուած չինիք փեթակը բաց անելու։

Աչքի առաջ ունենալով, որ, բացի մեղրից, մեղուները գարնանը որդ սնուցանելու համար մեծ քանակութեամբ ջուր են գործ ածում, ուստի, եթէ մեղուանոցի մօտերքում գետ կամ աղբիւր չը կայ, անհրաժեշտ է մեղուանոցում շարունակ ունենալ թարմ ջուր տաշտերով կամ ամաններով։ Տաշտերի մէջ պէտք է ածել ծղնօտ կամ փայտէ ձողեր, որպէս զի մեղուները ջուր վերցնելիս չը խեղդուին։

9. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՈՐԲԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԱՅՐ ՏԱԼ

Որքան հնարաւոր է, մեղուապահը շուտ պիտի օգնէ որբացած ընտանիքներին, որովհետև նախ՝ նրանց մէջ կարող են առաջ գալ բոռածու մեղուներ և երկրորդ՝ նրանք կարող են պատճառ դառնալ գողութեան սկսուելուն։ Եթէ մեղուանոցում պահեստի մայր կայ, մօրը պէտք է նստեցնել վանդակի մէջ, (նկ. 9) դնել պաշար՝ վանդակի մէջ յարմարե-

ցրած տեղում և այդ վանդակը զետեղել որբացած ընտանիքի բնի կենտրոնում երկու շրջանակի արանքում և պահել երկու օր։ Այդ ժամանակամիջոցից յետոյ, եթէ մեղուները հանգիստ են և կերակրում են մօրը, բացէք վանդակի ներքեւ մուտքը, որ մայրը դուրս գայ. բայց եթէ նկատէք, որ մեղուները գրգռուած են և աշխատում են մօրը սպանել այդ դէպքում մօրն ազատելլ պէտք է յետաձգել մի օրով, պատճառը պարզելու համար։ Սովորաբար դրա պատճառը լինում է այն, որ փեթակը ունենում է մայրաբուն, հետեւաբար հարկաւոր է կտրել մայրաբները և միայն հետեւեալ օրը ազատել մօրը։

10. ԲՈՌԱԾՈՒ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Եթէ մայրը հանգել է ձմեռը կամ գարնան սկզբներում և մեղուապահն էլ ժամանակին օգնութեան չէ հասել, մեղուներից մէկը կամ մի քանիսը սկսում են անկանոն կերպով ձուեր ածել, դնելով իւրաքանչիւր բջիջում մի քանի հատ, և այդ ձուերից դուրս են գալիս միմիայն բուռեր։ Այդ տեսակ մեղուները կոչւում են բոռածու մեղուներ։

Եթէ բոռածու մեղուները երևան են գալիս այնպիսի ժամանակ, երբ մեղուանոցում բուռեր չկան՝ մօրը բեղմնաւորելու, և պահեստի էլ մայր չունինք, այդ դէպքում բոռածու մեղուներով փեթակը պէտք է միացնել ուրիշ ընտանիքի հետ կամ բաժանել մի քանի ընտանիքների մէջ։ Իսկ եթէ բոռածու մեղուները երևում են այնպիսի ժամանակ, երբ մեղուանոցում բուռեր կան, պէտք է վարուել հետեւեալ կերպով. — հանել բոլոր հացերը, սրբել նրանց վըրացից մեղուներին և փոխարէնը՝ փեթակում դնել նոր մոմաթերթերով շրջանակներ և մի ուրիշ փեթակից էլ տալ ձուով և որդով մի հաց, որ մեղուները հնարաւորութիւն ունենան տուած ձուերից մայր պատրաստելու։



Եթէ այս նկարագրած եղանակով առաջին անգամից չը յաջողութիւնը պատուել բոռածու մեղուներից, ևոյն գործութիւնը պէտք է կրկնել, մինչև որ մեղուները պատրաստեն տուած ձուերից մայրաբուն։ Բոռածու մեղուները պատահում են և տարուայ միւս եղանակներին, երբ ընտանիքը զրկուած է մայր պատրաստելու հնարաւորութիւնից։

11. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԱՅՆԵԼԸ

Այն ընտանիքները, որոնք զրկուած են մօրից և մայր պատրաստելու էլ հնարաւորութիւն չունին կամ որոնց մայրը բոռածու է, պէտք է միացնել մի ուրիշ թոյլ ընտանիքի հետ, որը մայր ունի։ Այն փեթակի մէջ, որի հետ ուզում էք միացնել, ամբողջ բունը քաշեցէք մի կողքի վրայ և դրէք միջնատախտակը (սովորական միջնատախտակի կողքերից և տակից կպցրէք բարակ փայտէ ձողեր), որ երեք կողմից գրկած լինի, այսինքն՝ կպած լինի փեթակի յատակին և պատերին։ Այն ընտանիքը, որին ուզում էք միացնել, երեկոյեան՝ երբ բոլոր մեղուները աշխատանքից վերադեմ են տուն, մի շրջանակով բերէք և դրէք միջնատախտակի միւս՝ ազատ կողմը։ Ծածկեցէք արկանոցը նոր տեղափոխածի կողմից։ Երկու օրից յետոյ հեռացրէք միջնատախտակը և մօտեցրէք շրջանակները։

12. ՓԵԹԱԿՆԵՐԻ ՄԱՔԻՆԵԼԸ

Այս գործողութիւնը յարմար է կատարել երկու կամ երեք հոգով, որոնցից երկուսը բարձրացնում են փեթակի բունը յատակից, նախապէս ծուլի թողնելով արկանոցից, որ մեղուները չը խայթեն, իսկ երրորդը սրբում և մաքրում է յատակը։ Այդ աղբը պէտք է հաւաքել և հալել, որովհետև նա իր մէջ մոմ է պարունակում։ Խոնաւացած յատակները պէտք է փոխարինել ուրիշով և չորացնել։ Հարկաւոր է չորացնել նաև բարձը, որով ծածկուած է լինարկաւոր է աղբային պատուած մեղուների մաքրելու առաջնական մաքրութիւնը։

Նում փեթակը։ Փեթակները պէտք է մաքրել տարուայ ընթացքում երեք անգամ 1) գարնանը, 2) գլխաւոր մեղրաբերքի սկզբում, և 3) աշնանը։ հակառակ դէպքում կեղակից ցեց կարող է առաջանալ։

13. ՑԵՑ

Ինչպէս վերև ասացի, ցեցը առաջ է գալիս կեղակից և նա երեսում է այն փեթակներում, ուր թողնուած են աւելի շատ մեղրահացեր, քան մեղուները կարող են ծածկել, որպէս և թոյլ ու որբացած ընտանիքներում։ Եթէ ցեցն արդէն երևացել է և արդէն մեղրահացերի մէջ անցքեր է բաց արել, հարկաւոր է այդ հացերը անմիջապէս հալել։ Որգով հացերը, եթէ նոյնպէս ցեց ընկած են, պէտք է մաքրել մեղուներից և տալ ուժեղ ընտանիքներին։ Ցեցից ազատուելու համար հարկաւոր է ցեց ընկած փեթակի պատերը, միջնատախտակը և յատակը շաղ տալ նախթալինով և փեթակի մէջն էլ պահել կամֆարայի մի փոքրիկ կտոր՝ շորի մէջ փաթաթած և միաժամանակ անհրաժեշտ է գրանց յաճախ նայել։

14. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՈՐԼՈՒԾՈՒԹԻՒՆԸ

Այս հիւանդութիւնը նկատուում է գարնան սկզբներում և առաջ է գալիս մեղուների երկար ժամանակ փեթակում փակուած մնալուց, վատ կերակրից և անհանգիստ ձմերելուց։ Սովորաբար մեղուներն իրանց կղկղանքը թափում են փեթակից դուրս՝ թռչելիս։ Զմեռը՝ տուն դրած ժամանակը՝ նրանք պահում են կղկղանքը ստամոքսում և դատարկում են դուրս դնելու հէնց առաջին օրը, եթէ մեղուների ձմերելու տեղը եղել է բարեյաջող։ հակառակ դէպքում, եթէ մեղուների ձմեռուայ սենեակը պահանջածից աւելի ցուրտ կամ աւելի տաք է եղել, այդ ժամանակ նրանց հանգստութիւնը խանդարուում է,


սովորականից աւելի են ուտում. այդ պատճառով չափից աւելի են լցում մեղուների աղիքները և նրանք ստիպուած են լինում կղկղանքը թափել փեթակում՝ հացերի և պատերի վերայ. Նոյն անհանգստութիւնը առաջ են բերում մկները, մտնելով փեթակը. Սովորաբար գարնանը՝ առաջին թոփչքը գործելուց յետոյ, այդ հիւանդութիւնը ինքն իրան անցնում է:

15. ՄԿՆԵՐԸ

Մեղուների ամենավտանգաւոր թշնամիները մկներն են: Ուժեղ ընտանիքներում տարուայ երեք եղանակներին դրանք առանձին վնաս չեն հապցնում, բայց ձմեռը, երբ մեղուներին հարկաւոր է կատարեալ հանգստութիւն, նրանք մտնում են փեթակի մէջ, բուն են դնում, ուտում են մոմ ու մեղր և այնքան չեն ուտում, որքան վչացնում են: Մեղուները դրանց ներկայութիւնից անհանգստանում են, ոյժ են տալիս մեղր ուտելուն, որի հետևանքը լինում է փորլուծութիւն. իսկ եթէ այդ դրութիւնը երկար է տևում, մեղուներն ամբողջ պաշարը ուտում են և իրանք էլ հանգչում սովից: Փորձել եմ դրանց ոչնչացնելու գէմ առաջարկուած շատ ու շատ միջոցներ, բայց պիտի խոստովանեմ, որ այդ միջոցները ոչ մի հետևանք չեն տուել. եղել են դէպքեր, որ նոյն իսկ այդ առաջարկուած միջոցներով մկները չաղացել են: Մկների միակ թշնամին կատուն է, որի օգնութեանն էլ պիտի դիմել այդ դէպքերում:

16 ՈՐԴՆԱՅԱԿԻ ԵՒ ԹԹՈՒԱԾ ՈՐԴ


Հիւանդութեաննշանները: Նախ և առաջ այս հիւանդութիւնից վարակում են սերեկուած (կնքուած) որդերը: Այդ տեսակ որդի բջիջի սերեկը մուգ գոյն է ստանում, ներս ընկած է լինում և քանիսն էլ ծակծկուած են լինում ակնամոմի նման մոխրագոյն հատիկներ: Այս միջոցին ոչ միայն սերեկած որդն է վշանում, այլ և չկնքուած որդը, որը ձգւում է բջիջի ամբողջ երկարութեամբ և կպչում է նրա ներքին պատերին:



17. Որդնացաւով վարակուած հաց

նում: (Նկ. 17) Հիւանդութեան առաջին շրջանում սերեկած որդի վշանակն աննշանն է (10—12 բջիջ), բայց յետոյ նրա քանակը օրէցօր արագապէս շատանում է: Եթէ այդպիսի բջիջի սերեկը փորձէք բանալ մի չոփով կամ գնդասեղով (քորոցով), առողջ և սպիտակ որդի կամ հարսնեակի փոխարէն՝ կընկատէք թանձր, առածգական, մածուցիկ, դարչնագոյն, հասարակ սոսինձի վատ հոտով, մի հիւթ, որը չոփով խառնելիս՝ ձգւում է թելի պէս: Որդնացաւի զօրեղ զարգացած գէպքում հիւանդութիւնը կարելի է նկատել մինչեւ անգամ առանց փեթակը բանալու. այդ ժամանակ մեղուները համարեա թէ չեն թռչում, կորցնում են իրանց սովորական եռանգը, փեթակից ծանր հոտ է գալիս, իսկ արկանոցի առաջն էլ թափուած են լինում ակնամոմի նման մոխրագոյն հատիկներ: Այս միջոցին ոչ միայն սերեկած որդն է վշանում, այլ և չկնքուած որդը, որը ձգւում է բջիջի ամբողջ երկարութեամբ և կպչում է նրա ներքին պատերին:

Բժշկութիւնը: Նախ և առաջ հարկաւոր է արգելել մօրը ձու ածել՝ բանտարկելով նրան մայրաբնի մէջ մինչև 21 օր: Ամբողջ 21 օրուայ ընթացքում այդ ընտանիքին պէտք է ծուխ ատլ Արխիպէնկօյի լամպով (նկար 18) 20 °/0



18 Արթիպէնկոյի ւամպը
Քօրմալինով կամ Քօրմալինի բլիթներով, մեղուներին էլ կերակրել յատուկ պատրաստած շաքարաջրով (իւրաքանչիւր բաժակ շաքարաջրին խառնել 10—12 կաթիլ $20^{\circ}/^{\circ}$ Քօրմալին): 21 օրը լրանալուց յետոյ, մեղուներին հարկաւոր է տեղափոխել մի մաքուր փեթակ՝ նստեցնելով նրանց մաքուր մեղրահացերի կամ մոմաթերթերի վրայ, իսկ մօրը փոխել և շարունակել ծուխ տալ էլի 7—10 օր: Այս հացերը, որոնց վրայ վարակուած ընտանիքի մեղուներն էին նստած, պէտք է հալել, իսկ փեթակը ցանկալի է այրել:

Թթւած որդ: Մեղուների այս հիւանդութիւնն իր արտաքին տեսքով շատ նման է որդնացաւին, հոտած որդի ժահրահիւթը իսկական որդնացաւի գոյնն ունի և շատ անգամ բջիջների խուփերը նոյնպէս լինում են ծակծկուած: Այս հիւանդութիւնը վարակում է յաճախ սերեկած որդը: Զըկնքուած որդի ժահրը այս հիւանդութեան դէպքում չէ կպչում բջիջի ներքին կողքերին, այլ թափում է նըրը յատակի վրայ և չունի այն վատ հոտը, որը զգացւում է որդնացաւից, այլ սովորաբար քացախի կամ փըթած խնձորի հոտ է ունենում: Բացի սրանից այդ ժահրը ջրալի է, մածուցիկ չէ և չէ ձգուում: Այս հիւանդութիւնով վշանում են ինչպէս որդերը, նոյնպէս էլ մեղուները, և նրանց ստամքը փուած է լինում:

Բժշկութիւն: Այս հիւանդութեան բժշկութեան միջոցները նոյնն են, ինչ որ որդնացաւի դէպքում, այն է՝ ծուխ տալ Քօրմալինի շոգիով և մեղուներին կերակրել Քօրմալին խառնած շաքարաջրով: Հիւանդութեան ուժեղ զարգացման դէպքում մեղուներին տեղափոխել նոր փեթակներ և տալ մաքուր մոմահաց: Այս հիւանդութիւնը թէկ վարակիչ է, բայց այնքան էլ վասնգաւոր չէ:

17. ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Մեղուներին կերակրելը լինում է երկու տեսակ—1) կերակրելը կարիքի համար և 2) կերակրելը արդիւնաբերական նպատակով: Կարիքի համար կերակրում են այն ժամանակ, երբ փեթակը մեղր չէ ունենում: Երբ փեթակում պաշար չկայ, պէտք է տալ կամ շրջանակով մեղրահաց, կամ շաքար, կամ շաքարաջուր: Շաքարը գլխից կտրում են տափակ շերտով և դնում են շրջանակների վրայ՝ բնի կենարունում, պահանջի համեմատ 4—5 ֆնտ. Վերջանալուց յետոյ կրկնում են մինչև մեղրաբերքի սկսուելը: Կարելի է տալ նաև շաքարաջուր: Վերցնել երկու գունատ շաքարին կամ շաքարաւազին մի փունտ ջուր, եփ տալ և խառնել, ածել բանկաների մէջ և տալ իւրաքանչիւր անգամ 4—5 ֆունտ. բանկայի երեսը պէտք է նոսր շրուվ կապել և գլխիվայր դնել շրջանակների վրայ: Արթուն պէտք է հակել, որ մեղուները պաշարի նեղութիւն չքաշեն:

18. ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Արդիւնաբերական կերակրման նպատակն է որդ բազմացնելը: Եթէ շարունակ կերակրում էք մեղուներին և մեղուները առատ կերակրում են մօրը, մայրը սովորականից առաջ սկսում է ձու դնել և 45—50 օրուայ ընթացքում ընտանիքն այնքան զարգանում է, որ կարողանում է թէ իր ձմեռուայ պաշարը հայթայթել և թէ մեղուապահին էլ զգալի արդիւնք տալ: Այդ պատճառով էլ շահագիտական նպատակով կերակրելը սկսում են գլխաւոր բերքից 45—50 օր առաջ: Գլխաւոր պայմանն է, որ կերակրուող ընտանիքը հարուստ լինի մեղրով, որովհետեւ շատ որդին շատ էլ կերակրուր է հարկաւոր:

Պէտք է կերակրել շաքարաջրով: մի փունտ ջուր տաքացնել, խառնել և ամեն երեկոյ իւրաքանչիւր ըն-


տանիքին տալ մի մի բաժակ։ Աստիճանաբար պէտք է փեթակի տարածութիւնը մեծացնել, որպէս զի մայրը ձու դնելու համար ազատ բջիջներ ունենայ, միևնույն ժամանակն էլ փեթակը պէտք է ծածկած ու տաք պահել։

19. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Երբ դաշտում մեղը չկայ, մեղուները տրամադիր են յարձակուելու թոյլ և անմայր ընտանիքների վրայ, մանաւանդ գարնանը՝ բերքից առաջ և աշնանը՝ բերքից յետոյ։ Գողութեան դէպքում պէտք է սաստիկ նեղացնել արկանոցները. եթէ այդ էլ չօգնէ, յարձակման ենթարկուած ընտանիքը պէտք է շորով չորս կողմից ծածկել կամ ժամանակաւորապէս տուն դնել, որը պէտք է լինի մութ և հով։

20. Ա.ՌՀԵՍՏԱԿԱՆ ՄՈՄԱԹԵՐԹ

Շըջանակաւոր փեթակի զլիսաւոր առաւելութիւններից, հասարակ փեթակի համեմատութեամբ, մէկն էլ արհեստական մոմաթերթի դործածութիւննէ։ (Նկար. 19) Մոմաթերթը




19 Արհեստական մոմաթերթ

բացի նրանից, որ մեղահացերին կանոնաւոր ուղղութիւն է տալիս, մեղուների աշխատանքն էլ բաւականաչափ թեթևացնում է և մեծ ինսայողութիւն է լիում մեղը, որովհետեւ մեղուները մոմ արտադրելու համար շատ էլ մեղը պիտի ջործ ածեն։ բացի այդ բոլորից՝ արհեստական մո-

մաթերթը արգելվ է լինում բոռերի բազմանալուն, եթէ, իհարկէ, տալու լինինք շրջանակները ամբողջ մոմաթերթերով։

Արհեստական մոմաթերթը պէտք է կպցնել շրջանակն հետևեալ կերպով։ Այն մեղուանոցներում, որոնք միշտ մնում են միևնույն տեղը, շրջանակները երկաթաթելով ամրացնելու կարիք չկայ։ Պէտք է ունենալ շրջանակի ներսի չափին հաւասար մի տախտակ, որ ներքեալ և վերևի կողմերից պիտի ունենայ ձողեր և ազատ մտնի շրջանակի մէջ՝ ուղիղ կէս տեղը։ Մոմաթերթը դնում են տախտակի վրայ, վերևից հագցնում են շրջանակը, մոմաթերթն էլ ամրացնում են շրջանակի վերին և կողքի ձողերին և ապա թէյամանի մէջ (Նկար 10) հալեցրած մոմով կպցնում։ Նոյն ձեռվ ամրացնում են և վերնայարկի կիսաշրջանակները, որոնց չափերի համեմատ էլ պիտի տախտակ ունենալ։




20 Մոմաթերթով շրջանակ

Շրջանակներին կպցրած մոմաթերթերը, առանձնապէս այն ժամանակ, երբ լաւ յատկութեան չեն լինում կամ երբ նոր են ու ծանրաբեռնւած մեղուներով, որդերով ու մեղրով, պոկլում են շրջանակից ու վայր թափւում՝ ապականելով փեթակն և շատ անգամ պատճառ դառնալով գողութեան։ Ուստի հարկ է լինում միջոցներ ձեռք առնել այս անյարմարութեան առաջն առնելու համար։ Սովորական միջոցներից մէկն այն է, որ աշխատում են բնի համար գործադրելի մոմաթերթն առնել այն մեղուանոցներից կամ գործարաններից, որոնք լաւ, դիմացկուն և հաս-


մոմաթերթ են պատրաստում. իսկ երկրորդ միջոցը՝ երկաթաթելերն են, որոնք ամրացնուում են շրջանակներին 20-րդ նկարի վրայ ցոյց տուած եղանակով:

Սրա համար հարկաւոր է նախապէս շրջանակի վերին և ստորին ձողերին խփել չորս-չորս հատ երկծայր փոքրիկ մեխեր, առաջ մեխերի միջով անցկացնել երկաթաթերն ու ձգել այնպէս, որ երկաթաթելը լարուած դիրք ստանայ և ձգուած լարի նման էլ ձայն հանէ. երբ երկաթաթերն անցկացրած պատրաստ է, շրջանակին, հալած մոմի միջոցով, ինչպէս ցոյց տրուեց վերեւում, կպցնում են մոմաթերթը,



21. Վուարլէի դործիք

Իսկ այս վերջինը 21-րդ նկարի վայ ցոյց տուած դործիքով ամրացնում են երկաթաթելերին:



22. Պաշուի դործիք և մեխեր

Մեխեր խփելու համար բանեցնում են 22-րդ նկարի վրայ ցոյց տուած դործիքը:

21. ԽՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ԶԵՌԵԼ ԲԵՐԵԼ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեղուները կարելի է գնել պատրաստի շրջանակաւոր փեթակներում կամ հասարակ փեթակներում (կթոց

կամ քեօթուկ): Առաջինի ընտրութիւնը շատ հեշտ է. պէտք է միայն բաց անել և զննել փեթակը՝ իմանալու համար, թէ մայր կայ, ի՞նչ դրութեան մէջ են որդն ու պաշարը և ի՞նչ ոյժ է ներկայացնում ամբողջ ընտանիքը: Հասարակ տեսակի փեթակները ցանկալի է գնել գըլ-խաւոր բերքից քիչ առաջ, որովհետեւ այդ ժամանակ դժուար է պատահում, որ փեթակները հանգչին: Առաջուց պէտք է իմանալ, թէ մօտիկ շրջակայքում (յամենայն դէպս ոչ մօտիկ երկու վերստից, որովհետեւ մեղուների մի մասը կը վերադառնայ իր հին տեղը) ո՞վ է ծախում: Ընտրել գարնան մի տաք և պայծառ օր, մտաւորապէս կէս օրին, մի փոքր հեռաւորութեան վրայից դիտել, թէ փեթակներից որոնք են շատ եռանգով աշխատում և նշան անել այդ փեթակները: Երեկոյեան, երբ բոլոր մեղուները կը հաւաքուեն տուն, ծածկել նշան արած փեթակների արկանոցը, ճեղքերը ծեփել և գիշերով տեղափոխել գնողի մեղուանոցը: Եթէ մտադիր էք այդ գնած ընտանիքները փոխադրել շրջանակաւոր փեթակի մէջ, պէտք է գնած փեթակները իրարից հեռու տեղաւորել:

22. ՇՐՋԱՆԱԿԱԽՈՐ ՓԵԹԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մեղուներին տեղափոխում են կամ բերքի համար, կամ գնած տեղից սեփական մեղուանոցը բերելու: Շրջանակաւոր փեթակը տեղափոխելիս՝ ամենանհրաժեշտ պայմանն է օդի առատութիւնը, որովհետեւ մեղուներն այդ ժամանակ մեծ քանակութեամբ տաքութիւն են արտադրում, որից իրանք կարող են խեղդուել, իսկ մեղքահացերն էլ պոկուել: Հարկաւոր է փեթակի բունը յատակին լաւ ամրացնել մեխով կամ վինտով: Փեթակից պէտք է հեռացնել քաթանը, բարձր և կտորը և դրանց փոխարէնը գնել և ամրացնել մեխով կամ վինտով մետաղեայ ցանց շրջանակի մէջ՝ շինած ընի ամբողջ մեծութեամբ: Ցանցի շրջանակի ձողերը

պիտի այնպիսի հաստութիւն ունենան, որ ցանցի և փեթակի շրջանակների մէջ մնայ մէկ և կէս դիւյմ դատարկ տարածութիւն։ Փեթակի շրջանակները պէտք է թէ վերկից և թէ ներքինից հագցրած լինեն բաժանարարների մէջ (նկար 23). շրջանակների վերկից էր բնի ամբողջ տարա-



23. Վերին և ստորին բաժանարարներ ծութեամբ խաչաձև խփել ձողեր, որպէս զի շրջանակները ճանապարհի հարուածներից, իրանց տեղերից՝ բաժանարարներից՝ դուրս չգան։

Ուշ երեկոյեան, երբ մեղուները ժողովուել են տուն, կամ վաղ առաւօտեան, երբ մեղուները դեռ տանն են, արկանոցները պէտք է ամբողջովին ծածկել և մեխել։

Պէտք է աշխատել, որ մի տեղից մեղուները դուրս գալու անցք չունենան, հակառակ դէպքում նրանք կը յարձակուեն մարդկանց և անսասունների վրայ։

Շրջանակաւոր փեթակները կարելի է տեղափոխել ձիերով, սայլով և երկաթուղով։ Ձիերով կամ սայլով տեղափոխելիս, եթէ վերջինը բէսաօրներ չունի, պէտք է փեթակների տակ դնել խոտ կամ ծզնօտ և ճանապարհորդութիւնն էլ կատարել շատ զգուշութեամբ և բոլորովին կամաց, փեթակներն էլ այնպէս պէտք է զարսել կամ դնել, որ շրջանակի ուղղութիւնը ճանապարհին ուղղահայեաց լինի։

Եթէ տեղափոխութիւնը կատարում է այնպիսի ժամանակ, երբ մեղուների քանակութիւնը փեթակում շատ մեծ է, այդ դէպքում պէտք է վարուել բնի հետ այնպէս, ինչպէս նկարագրուած է, բացի ցանցը ամրացնելուց։ Բնի վրայ պէտք է դնել վերնայիշը 4—5 հատ կիսաշրջանակներով, որոնք պէտք է մեխուած լինին և վերնայիշը

էլ չորս կողմից ձողերով ամբացած լինի բնի հետ, որպէս զի իրարից չը բաժանուին. ապա դնել մետաղեայ ցանցը վերնայիշը վրայ և մեխել։

23. ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՐԱԿ ՓԵԹԱԿԻՑ ՇՐՋԱՆԱԿԱՑԻՈՐԻ ՄԷՋ ՓՈԽԱԴՐԵԼԸ

Այն հասարակ փեթակը, որ կամենում էք փոխադրել, եթէ յետեկի մասում, արկանոցի հակառակ կողմում, դատարկ տարածութիւն չունի, պէտք է կտրել դատարկ հացերը, որպէս զի դատարկ տարածութիւն բացուի։ Պէտք է շրջանակաւոր փեթակի մէջ դնել 2—3 շրջանակ հացով կամ մոմաթերթերով, բունը կտրել միջնատախտակով, դնել քաթանը, բարձը և կտուրը։ Պէտք է իր տեղից մի քանի քայլ հեռացնել հասարակ փեթակը և նրա տեղը դնել նոր պատրաստած շրջանակաւոր փեթակն այնպէս, որ վերջինի արկանոցը լինի նոյն տեղը և նոյն բարձութեան վրայ, ինչպէս եղել է հասարակ փեթակը դրած ժամանակ։

Դաշտից վերադառող մեղուները կը մտնեն նոր փեթակը։ Հասարակ փեթակը կանգնեցրէք գլխիվայր, որ արկանոցը մնայ գետնին, իսկ հակառակ կողմը՝ դատարկ տարածութիւնը, լինի վերև։ Ներքեկի մասից, որ գետնին է, կողքերից, փայտով թըլսկթըլսկացնելով, մեղուներին պէտք է քշել վերև դէպք դատարկ տարածութիւր, ընդմիջումներով թիկթիկոցը շարունակել, մինչև որ մեղուները, գլխաւորապէս մայրը, կը բարձրանան վերև։

Պէտք է բաց անել վերեկի մասի տիփարը և այնտեղից դիտել մեղուների բարձրանալը. յաճախ պատահում է, որ մօրը կը նկատէք բարձրանալիս. պէտք է շատ զգուշութեամբ բռնել նրա թներից, նստեցնել վանդակի մէջ և դնել փեթակը, շերեփով էլ հաւաքել կծիկ կազմած մեղուներին և նոյնպէս ածել նոր փեթակը։

Իսկ եթէ մօրը չընկատէք, թըլսկթըլսկոցը պէտք է շարունակել, մինչև որ մեղուների մեծ մասը վերև բարձ-

բանայ և կծիկ կազմէ: Շերեփով այդ կծիկը ածեցէք նոր փեթակի մէջ. հաւանական է, որ մայրը նոյնպէս այդտեղ կըլինի:

Այդ վերջացնելուց յետոյ, պէտք է սկսել մեղրահացերի կտրելը: Այդ գործողութիւնը ցանկալի է կատարել սենեակում, նախ՝ որ որդը չըստոչի, երկրորդ՝ մեղրի հոտից գողութիւն չառաջանայ: Հացերը պէտք է կտրել սուր դանակով և աշխատել, որ կտրելիս որդով հացերը չըփչանան:

Որդով հացերը պէտք է դարսել քաթանի վրայ, մեղրով հացերը դնել ամանի մէջ, իսկ սե, անպէտք և դատարկ հացերը հաւաքել առանձին՝ հալելու համար: Որդով և մեղրով հացերը պէտք է 4—5 տեղից կապել թելով կամ շորի բարակ կտորներով շրջանակի վերին և ստորին ձռղերից և դնել նոր փեթակի մէջ: Որդով հացերը պէտք է դնել ընտանիքի բնիկենարոնում—մեղրով հացերը կողքերից և ապա դատարկ հացերը: Վերջինից պէտք է դնել այնքան, որքան մեղուները կարող կըլինեն ծածկել:

Արկանոցը պէտք է այնքան նեղացնել, որ հազիւ մի կամ երկու մեղու կարողանանան անցնել: Փոխադրութեան գործողութիւնը պէտք է կատարել պայծառ և տաք օր կամ գարնան սկզբներում, երբ փեթակում քիչ որդ է լինում, կամ ուշ աշնանը, երբ որդ բոլորովին չէ լինում: Գարնանը փոխադրած ընտանիքներին ցանկալի է 3—4 օր կերակրել թանձր շաքարաջրով:

24. ԵՐԲ ՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ ՓԵԹԱԿԸ

Գարնանը հարկաւոր է մեծ խնամք տանել, որ փեթակը շարունակ պաշար ունենայ: մանաւանդ այդ ժամանակ պէտք է տաք ծածկած պահել նրան և հոգալ, որ մայրն էլ ձու դնելու միշտ աղատ տեղ ունենայ: Այս բոլորը կատարելու համար յաճախ պիտի հսկել—բաց անել փեթակը, մանաւանդ երբ որդի քանակութիւնը այնքան շատանում է,

որ երկու օրը մի անգամ կամ նոյն իսկ ամեն օր հարկաւոր է լինում նոր և նոր հացեր տալ:

Նոր հացերը պէտք է դնել բնի մէջ՝ կողքերից: Այդքան յաճախ բաց անելը ոչ մի վնաս չի կարող տալ. ընդհակառակը, նոր սկսողները ամեն անգամ նայելիս նոր և նոր բաներ կը սովորեն: Բայց նոյնը չէ կարելի ասել զիմաւոր բերքի ժամանակ, երբ հարկաւոր է մեղուներին թողնել հանգիստ՝ անդադար աշխատելու համար: Զըպէտք է բաց անել, գոնէ օրուայ որոշ ժամերին՝ 12—4ը, և այն փեթակները, որոնք ջահէլ՝ չըբեղմնաւորուած մայր ունին, որովհետև կարող է պատահել, որ հէնց այդ բոպէին մայրը վերադառնայ ամուսնական ճանապարհորդութիւնից և չը կարողանայ ճանաչել իր փեթակը բաց գրութեամբ:

25. ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՀԵՌԱՑՆԵԼԸ

Փեթակի բնի մեղրահացերը ժամանակի ընթացքում սեանում-անպէտքանում են: Այդ առաջ է գալիս նրանից, որ որդերի շապիկները մնում են մէջը և բջիջները քանի գնում՝ փոքրանում են՝ այդ շապիկներից. բնականաբար, այդ փոքրացած բջիջներից դուրս են գալիս ոչ կանոնաւոր զարդացած մեղուներ: Հէնց որ մեղրահացերը դառնում են լոյսի դէմ անթափանցելի, պէտք է դրանց փոխել: Այդ հացերը լաւ է հեռացնել գարնանը, երբ դատարկ են լինում, կամ աշնանը՝ երբ մեղուներին պատրաստում են ձմեռուայ համար:

26. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՄԱՅՐԵՐ ՀԱՆԵԼԸ

Խնչպէս և առաջ ասացի, մայրը երրորդ տարուանից կորցնում է մեծ քանակութեամբ ձու ածելու. ընդունակութիւնը: Մեղուապահի զիմաւոր գործերից մէկն էլ այն է, որ այդ տեսակ մայրերին փոխարինէ ջահէլ, աղնիւ ծագում ունեցող մայրերով: Մայրերը պէտք է պատ-

բաստել ուժեղ, աշխատասէք և խելօք ընտանիքներից։ Նոյնանման ընտանիքներում միևնոյն ժամամանակն էլ պէտք է պատրաստել բոռեր՝ մայրերին բեղմնաւորելու համար։ Մայր պատրաստող ընտանիքներին ամբողջ ժամանակամիջոցում, մինչև մօր դուրս գալը, անհրաժեշտ է կերակրել թանձր շաքարաջրով, տալով ամեն երեկոյ մի բաժակ, և միևնոյն ժամանակն էլ պէտք է տաք ծածկած պահել փեթակը։

Ընտրելով վերևում յիշած յատկութիւններով օժտուած մի ուժեղ ընտանիք, վերցրէք մօրը, որ կարելի է տալ մի որեիցէ անմայր ընտանիքի կամ ձագ կազմել։ Այդ ընտանիքը զրկուելով մօրից, պատրաստում է մայրաբներ, որոնցից մանրները և անկանոնները պէտք է ոչընչացնել։

Մայրերի դուրս գալուց 2-3 օր առաջ, պէտք է կազմել մայրաբների քանակութեան համեմատ փոքրիկ ընտանիքներ, մայրերին պտղաբերելու համար։ Վերցրէք սովորական փեթակ, բաժանեցէք միջնատախտակով մի քանի մասերի, որպէս զի իւրաքանչիւր մասում կարելի լինի դարսել երեք շրջանակ։

Դադան-Բլատտի փեթակը կարելի է բաժանել երեք մասի։ Իւրաքանչիւր մասում պէտք է դնել մի շրջանակ որդով և նստած մեղուներով, որ պէտք է վերցնել միջակ ոյժ ունեցող ընտանիքներից, օրուայ տաք ժամերին։ Դրա մի կողմից դրէք մի շրջանակ մեղով և միւս կողմից էլ մի շրջանակ դատարկ հացով կամ մոմաթերթով, ուրիշ փեթակից էլ թափ տուէք 2—3 շրջանակների վրայ նստած ջահէլ, գեռ ևս դաշտ չըգնացած, մեղուներ։

Այսպէս պատրաստելուց մի օր յետոյ, երբ մեղուները կըզգան իրանց որբութիւնը, իւրաքանչիւրին պէտք է տալ մի մայրաբուն։ Մայրաբները պէտք է կտրել զգուշութեամբ սուր դանակով, փոքրիկ հացի հետ, որից

և պէտք է բռնել և բնական զրութեամբ ու նոյն զգուշութեամբ դնել ընտանիքի կենարոնի երկու շրջանակի մէջտեղում և փայտի բարակ ձողիկներով ամրացնել մեղրահացից կամ շրջանակի վերին ձողից։ Մայրը կատարեալ լինելու համար, պէտք է և բոռը, որից նա բեղմնաւորուելու է, լինի աղնիւ ընտանիքից։ Գարնանը մի այդպիսի ընտանիքի բնի կենարոնում հարկաւոր է դնել բոռաբջիջներով մի լաւ հաց, բունը նեղացնել միջնատախտակով, որպէս զի մեղուները խիտ նստած լինին հացերի վրայ, ամեն երեկոյ էլ կերակրել շաքարաջրով, որից յետոյ մայրը ձուերով կըլցնէ այդ բոռաբջիջները։ և միևնոյն ժամանակն էլ պէտք է աշխատել, որ վատ և թոյլընտանիքներից բոռեր չառաջանան և տռաջացած դէպքումն էլ՝ ոչնչացնել դրանց։ բոռի որդերը, եթէ սերեկած են, հարկաւոր է դանակով կտրել գլուխները, իսկ չըկնքուած որդի վրայ պէտք է ջուր սրսկել, երկու դէպքումն էլ մեղուները նրանց դուրս կը զցեն փեթակից։ Այս վերջին դրութիւնից ազատուելու համար կարելի է մայրեր պատրաստելու գործողութիւնը սկսել աւելի վաղ, քանի դեռ բնական բոռերը առաջ չեն եկել։

Եթէ այդ ջահէլ մայրերը բեղմնաւորելուց յետոյ ըսկըսեն ձու ածել դրանց կարելի է գործածել ուրիշ պէտքերի համար, իսկ ընտանիքին նորից կամ մայրաբուն տալ կամ միացնել հարկան ընտանիքի հետ։ հարկաւոր է միայն վերցնել միջնատախտակը և մօտեցնել շրջանակները։ Նոյնը պէտք է անել և այն դէպքում, երբ ջահէլ մայրը, ամուսնական ճանապարհորդութիւն կատարելու ժամանակ, կորչում է։ Ոչ մի դէպքում չըպէտք է թոյլ տալ, որ այդ փոքրիկ ընտանիքները իրանք իրանցից պատրաստեն մայր։ Նոյնպէս պէտք է հետեւել նաև այն ընտանիքներին, որը պարապած են մայրեր պատրաստելով, որ ժամանակին դրանց մայրերը բեղմնաւորուին։ Հակառակ դէպքում

այդպիսիներին նոյնպէս պէտք է տալ հասունացած մայրաբուն:

27. ՄԱՅՐԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Եթէ մայրը ծերացել է կամ որ և իցէ պատճառով անպէտք է դարձել, հարկաւոր է՝ փոխել նրան: Փեթակից հեռացրէք ին մօրը և հէնց նոյն օրը տուէք վանդակով նոր մայր և վարուեցէք անպէս, ինչպէս նկարագրած է «Ի՞նչպէս պէտք է որբացած ընտանիքին մայր տալ» գլխումը:

28. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԶԱԳ ՏԱԼԸ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԶԱԳ ՎԵՐՑՆԵԼԸ

Եթէ փեթակը լցում է որդով և մեղուներով, ընտանիքի մի մասը բաժանւում է՝ նոր ընտանիք կազմելու համար: Զագը լինում է բնական և արհեստական: Բընական ձագն այն է, երբ մեղուները իրանք են բաժանւում՝ դուրս դնում, իսկ արհեստականը, երբ մեղուապահը ինքն է բաժանում նրանց և նոր ընտանիք կազմում:

29. ԲՆԱԿԱՆ ԶԱԳ

Բնական ձագերը դուրս են գալիս գլխաւոր բերքի սկզբում կամ քիչ առաջ և այդ բանը տեսում է մինչև բերքի վերջը: Եթէ բարեյաջող ընտանիքներում նկատէք բուեր և մայրաբներ, այդ նշանակում է, որ փեթակը պարաստում է շուտով ձագ դուրս հանելու: Առաջին ձագը՝ առաջնաձագը, որը դուրս է գալիս սովորաբար հին մօր հետ, դուրս է գալիս հէնց այն օրը, երբ եղանակը բարեյաջող է, երբ մայրաբներից մէկն ու մէկը կնքւած է:

Առաջնաձագերը դուրս են գալիս լաւ եղանակներին և օրուայ սրոշ ժամերին՝ 10—3 ժամը: Երկրորդ ձագը դուրս է գալիս առաջնաձագից 8—9 օր յետոյ ջահէլ մայրերով, զրա համար եղանակը և ժամը նշանակութիւն չունին: Առաջնաձագի մայրը՝ ծանրաբեռնուած լինելով ձուիկներով՝


շատ հեռու չէ թռչում և սովորաբար իջնում է փեթակից ոչ հեռու՝ ծառի կամ թփի վրայ: Եթէ ձագը իջել է ծառի ձիւղի վրայ, պէտք է ձագակալը (նկ.

25) բռնել տակը և ձիւղը թափ տալ ձագակալի մէջ. իսկ եթէ թափ տալու յարմարութիւն չկայ, պէտք է մեղուներին հաւաքել շերեփով կամ աւելել խոզանակով կամ ծուխ տալով քշել: Եթէ մեղուապահը ցանկանում է փեթակների թիւը շատացնել իւրաքանչիւր ձագ պէտք ածել առանձին փեթակի մէջ, իսկ եթէ ուղում էք մեղը ստանալ, պէտք է կազմել ուժեղ ձագեր՝ մի քանիսը իրար հետ միացնելով:

Պէտք է միացնել առաջնաձագերը բեղմնաւորւած մայրերով առաջնաձագի հետ, իսկ երկրորդ ձագերը՝ ջահէլ մայր բերով երկրորդ կամ երրորդ ձագերի հետ: Հակառակ դէպքում՝ կարող է մէկը միւսին ջարդել: Որպէս զի երկրորդ-երրորդ ձագերը չըփախչին փեթակից, պէտք է տալ նրանց մի կտոր հաց որդով և ձուով:

30. ՄԻՋՈՅ ԵՐԿՐՈՐԴ ԶԱԳԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԴԵՄ

Մեղուապահը ձագ տալու ամբողջ միջոցում շարունակ պէտք է ուշադրութեամբ հսկէ, թէ ձագը որ փեթակիցն է դուրս գալիս և որտեղ է իջնում: Մեղուները, երբ թողնուած են իրանք իրանց՝ յաճախ շատ ձագ են տալիս, որից թուլանում է մայր փեթակը. թոյլ են լինում և ձագերը. Մեղուապահի միջամտութիւնն այս դէպքում անհոաժեշտ է, որպէս զի թոյլ չտայ մէկից աւելի ձագ տալուն: Դորա առաջն առնելու համար, պէտք է ձա-



գը դնել մայր փեթակի տեղը, իսկ վերջինը դնել մի այլ տեղ:

31. ԶԱԳԻ ՏԵՂԱԽՈՐԵԼԸ ՓԵԹԱԿԻ ՄԷՋ

Փեթակի մէջ՝ զրէք ձագի մեծութեան համեմատ շըջանակներ՝ պատրաստի հացով կամ մոմաթերթով, նեղացրէք բունը միջնատախտակով, զրէք քաթանը ու բարձը, հաւաքեցէք ու ծածկեցէք փեթակը: Փռեցէք սփոսց արկանոցի առաջ և թափ տուէք ձագը: Զագերին առաջին երեք օրը ցանկալի է կերակրել շաքարաջրով: Բոլոր ձագերը, գլխաւորապէս ջահէլ մայր ունեցողները, մինչև բեղմնաւորելը մեծ հսկողութիւն են պահանջում:

32. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԶԱԳ ՎԵՐՑՆԵԼԸ

Արհեստական կերպով ձագ վերցնելը բնականից մեծ առաւելութիւններ ունի. նախ՝ մեղուալահը կարիք չունի մեղուանոցի վրայ մի ամիս հսկելու և վախենալու ձագերի փախչելուց և երկրորդը՝ մեղուները՝ ձագ տալու ժամանակ, համարեա, ամբողջ 10 օր չեն աշխատում, որ մեծ ազդեցութիւն է անում մեղրի քանակի վրայ:

Արհեստական ձագը պէտք է վերցնել զօրեղ ընտանիքներից, որ առնուազն ունի 7 հաց որդով: Զագը վերցնելու համար պէտք է ընտրել պայծառ օր՝ ժամը 11—3-ը, երբ մեղուների մեծ մասը դաշտումն է:

Մայր փեթակից, որից ձագ էք հանում, առանձնացրէք ժամանակաւորապէս այն շըջանակը, որի վրայ մայրն է: Նոր փեթակն էլ կազմեցէք այսպէս. ափերից զրէք մի մի շըջանակ մեղրով և մի մի շըջանակ էլ դատարկ հացով կամ մոմաթերթով. մայր փեթակից վերցրէք երեք շըջանակ որդով, թափ տուէք կամ աւելեցէք մեղուներին ու զրէք նոր փեթակի բնի կենտրոնում. եթէ պահեստի մայր կամ հասած մայրաբուն չունիք նոր ընտանիքին տալու, մայր փեթակից պէտք է վերցնել էլլ մի հաց որ-

դով, ձուերով և նստած մեղուներով ու դնել նոր փեթակի մէջ, որպէս զի իրանց համար մայր պատրաստեն:

Մօրը իր շըջանակովը վերադարձրէք մայր փեթակին. հաւաքեցէք բունը և զրէք մեղուանոցում մի այլ տեղ, իսկ դորա տեղը զրէք նոր փեթակը: Արհեստական ձագ վերցնելու համար ցանկալի է պահեստի մայրեր կամ հասած մայրաբներ ունենալ և հէնց նոյն օրն էլ տալ նոր կազմած ընտանիքին մայր կամ մայրաբուն:

33. ԳԼԽԱԽՈՐ ՄԵՂՄԱԲԵՐՔԸ

Գլխաւոր մեղրաբերքը պէտք է վարձատրէ մեղուապահի ամբողջ տարուայ աշխատանքը: Ուժեղ ընտանիքները կարող են մեծ բերք տալ ուստի մեղուապահը պէտք է իմանայ իր տեղի գլխաւոր բերքի ժամանակը և դրա համեմատ էլ պատրաստէ ուժեղացնէ ընտանիքները: Բերքի ամենաճիշտ ժամանակը որոշողը կշեռքն է, ուստի իւրաքանչիւր մեղուանոցում գոնէ մի փեթակ՝ միշն ոյժի, պէտք է դրուած լինի կշեռքի վրայ:

Իւրաքանչիւր փեթակի օրական բերքի մուտքը կարող է հասնել 5—15 ֆունտի և մեղուապահը շարունակ պէտք է հսկէ, որ մեղուները միշտ ազատ տեղ ունենան մեղրը ամբարելու համար: Եթէ բունը լցուում է մեղուներով և մեղրով, պէտք է դնել վերնայարկը: Նախ վերնայարկի դնելը՝ մեղուապահը պէտք է զննէ ընտանիքը՝ ստուգելու համար 1) մայրը ազատ տեղ ունի՞ ձու դնելու. եթէ չըկայ, պէտք է վերցնել մէկ կամ երկու հաց բաց՝ ըլկնքուած որդով, թափ տալ նստած մեղուները և տալ թոյլ ընտանիքներին, իսկ փոխարէնը դնել մէկ-երկու շըջանակ պատրաստի հացով կամ մոմաթերթով, 2) եթէ շըջանակ պատրաստուած է ձագ տալու, կտրել մայրաբները և 3) յատակը մաքրել:

Եթէ եղանակը բարեյացնող է և բերքի քանակն էլ

մեծ է, վերնայարկը դնելուց 6-7 օր յետոյ, պէտք է նայել վերնայարկերը, որոնք կարող են լիքը լինել մեղրով:

Եթե վերնայարկը լիքն է մեղրով, պէտք է վերցնել մեղրի կէսը նստած մեղուներով և տալ այն ընտանիքներին, որոնք պահանջ են զգում վերնայարկի: Թէ առաջինում և թէ երկրորդում մնացած կէսը պէտք է լցնել՝ ամեն մէկի մէջ դնելով կիսաշրջանակներ պատրաստի հացով կամ մոժաթերթով: Առաջին ընտանիքը մեծ աշխոյժով կըլրցնէ մէկի մէջ դրած դատարկ հացերը, իսկ երկրորդը, ունենալով վերնայարկում մեղր ու մեղուներ, անմիջապէս կըլրածրանայ և կըսկսէ եռանդսվ աշխատել:

Եթէ մեղուանոցում չըկայ վերնայարկ պահանջող ընտանիք և մեղրն էլ հստած չէ ցենտրաֆուգով թափելու, այդ դէպում պէտք է դնել երկրորդ վերնայարկը, որը պէտք է դնել առաջինի տեղը՝ անմիջապէս բնի դիմին, իսկ լիքը՝ դատարկի վրայ:

34. ԽՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԹՈՅԼ ՀՆՏԱՆԻԲՆԵՐԸ ԲԵՐՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Եթէ մեղուապահը անծանօթ լինելով մեղուանոցի տեղի պայմանների հետ, չէ կարողացել ժամանակին իր փեթակները ուժեղացնել՝ մեղր ստանալու համար, այդ դէպում հարկաւոր է մեղուանոցի մի մասը ուժեղացնել միւսի հաշւով: Այդպիսով մի մասը կուժեղանայ և արդիւնք կըտայ, իսկ միւս մասը կը ժողովէ այնքան պաշար, որով կարող է անվտանգ ձմերել: Մեղուներն ուրախութեամբ ընդունում են օտար ջահել մեղուներին, այդ պատճառով էլ այս գործողութիւնը պէտք է կատարել օրուայ տաք ժամերին՝ ժամի 10—3-ը, եթե մեծ մեղուները դաշտումն են: Մեղուանոցի մի մասի ընտանիքներում թողէք 4 կամ 5 շրջանակ և մնացած շրջանակները որդով և նստած մեղուներով վերցրէք և դրէք այն մասի փեթակները, որից


կամենում էք արդիւնք ստանալ, նախապէս գտէք մօրը, որ սխալմամբ այդ հացերի հետ չըտանէք:

35. ՄԵՂՐԱԲԵՐՔԻ ՎԵՐՋԱՆԱԼԻ

Եթե մեղուները սկսում են առանց եռանդի թռչել, այդ նշանակում է՝ մեղրաբերքը վերջացած է: Որտեղ կայ կշեռք, հեշտ է որոշել մեղրաբերքի վերջը: Մեղրաբերքը վերջանալուց յետոյ՝ անմիջապէս պէտք է հաւաքել վերնայարկերը: Պէտք է բաց անել փեթակը, հեռացնել վաթանն ու բարձը և ծուխ տալով մեղուներին՝ քշել վերքաթանը ու բարձը և ծուխ տալով մեղուներին՝ քշել վերնայարկերը: Պէտք է բաց անել փեթակը, հեռացնել մէկ-մէկ կիսաշրջանակ-ները, աւելել վրայից մեղուները և դարսել արկղի մէջ ները, աւելել վրայից մեղուները և դարսել արկղի մէջ (տես նկար 17) ու տանել քամարանը: Այս գործողութիւնը ցանկալի է կատարել վաղ առաւտեան կամ ուշ թիւնը ցանկալի է կատարել վաղ առաւտեան կամ ուշ երեկոյեան, որպէս զի գողութիւն չառաջանայ: Յամենայն երեկոյեան, որպէս զի գողութիւն չառաջանայ: Յամենայն երեկոյեանը է նեղացնել մեղուանոցի բոլոր փեթակ-դէպս հարկաւոր է նեղացնել մեղուանոցի բոլոր փեթակ-

36. ՑԵՆՏՐԱՖՈՒԳՈՎ ՄԵՂՐ ՔԱՄԵԼԻ

Յատուկ դանակով (նկար 11) պէտք է հացերի կնիքը երկու երեսից բարակ շերտով կտրել և դնել շրջանակը երկու արկղի մէջ, (նկար 26) ապա պտտեցնել ցենտրաֆուգը: Մի երեսից մեղրը թափելուց յետոյ, պէտք է բարեսիցն էլ մեղրը թափուի: Եթէ մեղրը քամում էք բերքը երեսիցն էլ մեղրը թափուի: Եթէ մեղրը քամում էք բերքը վերջացնելուց յետոյ՝ որքան էլ քամարանը պաշտպանուած լինի մեղուների մտնելուց, դարձեալ այդ գործողութիւնը լինի մեղուների մտնելուց, դարձեալ այդ գործողութիւնը լինի մեղուների գիշերները, որովհեաև մեղրի հոտից կը լաւ է կատարել գիշերները, որովհեաև մեղրի հոտից կը սկսուի մեղուների գողութիւն և տեղի կունենան յարձակումներ մարդկանց և անասունների վրայ: Որպէս զի մեղրը կունեն մարդկանց և անասունների վրայ: Մեղրը մաքրուի մոմի փոքրիկ կտորներից, ցենտրաֆուգից մեղրը պէտք է ածել բարձր ամանի մէջ, որ ներքելից պէտք է



36. Յենտրաֆուգը

ունենայ ծորակ: Մեղրի կնիքներն էլ պէտք է փոել մաքուր ցանցի վրայ և գնել տաշար, որ քամուի, խակ դատարկած հայերը երեկոները յետ տալ մեղուներին մաքը բելու համար:

37. ՔԱՄԱՐԱՆ ԵՒ ՊԱՀԵՍ

Մեղրը պահելու և ցենտրաֆուգով քամելու սենեակը՝ քամարանը, պէտք է լաւ պաշտպանուած լինի, որ ոչ մի կողմից մնդուները մուտք չունենան: Լուսամուտներն էլ պէտք է շինել փոքրիկ և այնպէս, որ լուսամուտի արջանակը կարելի լինի շուռ տալ ուղղահայեաց պտուտակի վրայ, որպէս զի ցանկացած դէպքում՝ մեղուներին դուրս անելու համար կարելի լինի պտոյտ տալ արձանակը: Սենեակը պէտք է լինի անպայման չոր:

38. ՄԵՂՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՆԵՐ

Մեղրի ամանները յարմար է շինել սպիտակ երկաթից և խուփն էլ այնպէս շինել, որ հերմետիկ կերպով

ծածկուի: Ամանները պէտք է շինել փոքր, որ պարունակեն 2-3 փութ մեղր: Դրանք շատ յարմար են մեղր տեղափոխելու համար, մանաւանդ եթէ հազքրած լինեն արկղների մէջ:

39. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԶՄԵՌՈՒԱՅ ՀԱՄԱՐ

Վերնայարկերը վերցնելուց յետոյ, պէտք է վերջին անգամ նայել փեթակները և պատրաստել ձմեռուայ համար: Այն ընտանիքները, որոնք մայր չունին, պէտք է մայր տալ կամ միացնել ուրիշի հետ: Որտեղ ձմեռուայ համար պաշարը քիչ է, հարկաւոր է մեղրով հարուստ ընտանիքներից վերցնել և լրացնել: Բնի մեղրը, որտեղ գարնանը բերք չէ լինում, ցանկալի է ամբողջապէս թողնել մեղուներին: Յարմար ժամանակ է բնից հեռացնել անպէտքացած, նոյնպէս և բոռաբջիջներով հացերը: Հարկաւոր է մաքրել յատակը, բունը նեղացնել միջնատափատակով, դնել մաքուր բաթան ու բարձր և ծածկել փեթակը: Ցրտերը ընկնելուց յետոյ՝ երբ այլևս գողութեան վտանգ չըկայ, արկանոցները փեթակի ամբողջ երկարութեամբ հարկաւոր է բաց թողնել, որպէս զի մեղուները ձմեռը օդի պակասութիւն չզգան:

40. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԶՄԵՐԵԼԸ

Մեկտւն մեզ մօտ կարող է ձմերել բացօղեայ, ուղղակի իրանց զրած տեղում, միայն պահեստի մայրերին և թոյլ ընտանիքներին անհրաժեշտ է տուն դնել, որը պէտք է լինի չոր, մթնացրած և աղմուկից հեռու: Եթէ մեղուները ձմերում են բացօղեայ, մեղուապահի միակ գործն է արկանոցի առաջ սառած ձիւնը զգուշութեամբ մաքրել, որպէս զի մեղուները օդի պակասութիւն չզգան: Տուն գրած մեղուներին էլ պէտք է հսկել, որ մկները չանհանգըստացնեն:

41. ՄՈՄԱՀԱՅԵՐԻ ՊԱՀԵԼԸ

Զոր հացերը պէտք է շարել վերնայարկերի մէջ,
վերնայարկերը՝ իրար վրայ դարսելով գլուխը լաւ ծածկել,
որ մկներ չըմտնեն և դնել ծածկի տակ այնպիսի տե-
ղում, որտեղ հակառակ քամիներ են խաղում:

¶

ՑԱԿԱՐ

1. Կովկասեան մեղուները	5
2. Մեղուի ընտանիքի կազմը և կեանքը	5
3. Ի՞նչ են բերում մեղուները	7
4. Ի՞նչպիսի փեթակ է հարկաւոր	7
5. Ի՞նչ տեսակ իրեր և գործիքներ են հարկաւոր	10
6. Ե՞րբ պէտք է մեղուներին դուրս դնել	14
7. Ի՞նչպէս պէտք է վարուել մեղուների հետ	15
8. Փեթակների գննելը	15
9. Ի՞նչպէս պէտք է որբացած ընտանիքներին մայր տալ	16
10. Բոռածու մեղուներ	17
11. Բնտանիքների միացնելը	18
12. Փեթակների մաքրելը	18
13. Ցեց	19
14. Մեղուների փորլուծութիւնը.	19
15. Մկները	20
16. Որդնացաւ և թթուած որդ	20
17. Մեղուներին կերակրելը	23
18. Արդիւնարերական նպատակով կերակրելը	23
19. Մեղուների գողութիւնը	24
20. Արհեստական մոմաթերթ	24
21. Ի՞նչպէս պէտք է ձեռք բերել մեղուների ընտանիքը	26
22. Շրջանակաւոր փեթակների տեղափոխութիւնը	27
23. Մեղուներին հասարակ փեթակից շրջանակաւորի մէջ փոխադրելը	29
24. Ե՞րբ պէտք է նայել փեթակը	30
25. Հին հացերի հեռացնելը	31
26. Արհեստական կերպով մայրեր հանելը	31
27. Մայրերի փոխարինումը	34
28. Մեղուների ընական ձագ տալը և արհեստական ձագ վերցնելը	34

29.	Բնական ձագ	34
30.	Միջոց երկրորդ ձագի դուրս զալու դէմ	35
31.	Զագի տեղաւորելլ փեթակի մէջ	36
32.	Արհեստական ձագ վերցնելլ.	36
33.	Գլխաւոր մեղրաբերք.	37
34.	Ի՞նչպէս պէտք է ուժեղացնել թոյլ ընտանիքները բերքի ժամանակ	38
35.	Մեղրաբերքի վերջանալլ	39
36.	Ցենտրաֆուզով մեղր քամելլ	39
37.	Քամարան և պահեստ.	40
38.	Մեղրի համար ամաններ	40
39.	Նախապատրաստութիւններ ձմեռուայ համար	41
40.	Մեղուածերի ձմերելլ	41
41.	Մոմահացերի պահելլ	42





ՀՀ Ազգային գրադարան



NL0298138



ԿՈՎԿԱՆԵԱՆ ԸԹԸԶԻՆ

ԷԼԵՖՏՐՈ-ՄԵԽԵՆԱՅԱԿԱՆ

ՄԵՂԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱԴՅՈՒԹ ԴԻՒՄԱՅԻ

Թիֆլիս, Միքայէլեան պրոմագէկտ, № 140



ՓԵԹԱԿՆԵՐ ԵՒ ՓԵԹԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

ԱԲՀԵՍՏԿԵՆ ՄՈՄԵԹԵԲԹ ԵՒ ՄԵՂԲԵՐՈՒ

Մեղուարուծական զործիքներ, ցենտրափուղ, մոմահալ,
զլանձե մերենայ և այլն.

ՄԵՂԱՅԻՆԵՐԻ, ՄԱՅՐԵՐԻ ՊԱՀԵՍ

Ք Ա. Մ Ա. Շ Մ Ե Դ Բ Ե Կ Մ Ե Զ Բ Ա Ց Ա Ց

ԳՐՔԵՐ ԵՒ ԶԵԽՆԱՐԿՆԵՐ

Պատկերազարդ պրեյս-կողանաներն ուղարկվում են ծրի



22.901